

**ՍԱՄՎԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ**

Հոդվածը նվիրված է ՀՀ սահմանադրական դատավարության որոշ տեսական և գործնական հիմնախնդիրների քննարկմանը: Հեղինակի կողմից տրվում է սահմանադրական դատավարության բնորոշումը, առանձնացվում են ՀՀ սահմանադրական դատավարության փուլերը, ինչպես նաև քննարկվում են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում իրավական փաստարկման առանձնահատկությունները:

*Հիմնարար բառեր-սահմանադրական դատարան, սահմանադրական դատավարություն, դատավարության փուլ, սահմանադրական վերահսկողություն, սուբյեկտ, իրավական փաստարկ, սահմանադրական դատարանի որոշում:*

Սահմանադրական արդարադատությունը իրենից ներկայացնում է երկու ելակետերի՝ սահմանադրական վերահսկողության և դրա իրականացման դատավարական ձևի համադրություն: Արդյունքում այն հանդիսանում է պետաիշխանական վերահսկողական գործունեության տեսակ, որն իրականացվում է մասնագիտացված դատական ընթացակարգով:

Իշխանության սահմանադրական համակարգում սահմանադրական վերահսկողության փաստացի նշանակությունը որոշվում է ոչ թե սահմանադրական վերահսկողության կազմակերպարական ձևով, այլ սահմանադրական վերահսկողության նպատակներին հասնելու համար անհրաժեշտ միջոցների ամբողջությամբ, մասնավորապես՝ սահմանադրական վերահսկողության մարմնի լիազորություններով և դրանց իրացման դատավարական ձևով<sup>2</sup>: ՀՀ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով<sup>3</sup>»: Սահմանադրությունը սահմանադրական դատարանի գործունեությանն անդրադառնում է հատվածական և շատ ընդհանուր կանոններով, ուստի սահմանադրական դատարանի գործունեության կարգավորումն ամրագրելու պարտականությունն առավելապես կրում է ՀՀ Ազգային ժողովը:

Անհրաժեշտ է նշել, որ հենց «դատավարություն» հասկացությունը բազմիմաստ է: Ն. Ռայկովան ընդգծում է, որ ներկայում դատավարությունը բնորոշվում է որպես դատական իշխանության իրականացման միջոց, որպես արդարադատություն իրականացնելու կարգ կամ դատավարական ձև, որպես իրավաբանական հարցերի քննության և լուծման առնչությամբ դատարանի գործունեություն, որպես դատավարական հարաբերությունների համակարգ, որպես դատավարական գործունե-

ության և իրավահարաբերությունների ամբողջություն, որպես երեք բաղադրատարրերի՝ դատավարական գործունեության, դատավարական հարաբերությունների և դատավարական ձևի միասնություն:

«Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի մասին» Դաշնային սահմանադրական օրենքի մեկնաբանություններից մեկում սահմանադրական դատավարությունը ներկայացվում է որպես ՌԴ սահմանադրական դատարանում վերջինիս իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ ներկայացված դիմումների քննության և լուծման վարույթ: Միաժամանակ սահմանադրական դատարանն իրավասու է ինքնուրույն կարգավորել և հստակեցնել դատավարության որոշ հարցեր սահմանադրական դատարանի կանոնակարգի և իր որոշումների միջոցով: Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը դատավարության կարգը սահմանելու հարցում օժտված է դատավարական ինքնավարությամբ, բայց ոչ անկախությամբ: Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի կանոնակարգը կարող է մանրամասն կարգավորել այն հարցերը, որոնց վերաբերյալ Հիմնական օրենքը և Դաշնային սահմանադրական դատարանի մասին օրենքը բովանդակում են միայն ընդհանուր դրույթներ, սակայն չի կարող խախտել դրանք և դուրս գալ օրենսդրի կողմից սահմանված շրջանակներից: Հիմնական օրենքը դաշնային օրենսդրին լիազորում է կանոնակարգել վարույթը դաշնային սահմանադրական դատարանում: Թեև այդ պահանջից բխում է, որ որոշակի հարցեր պետք է կարգավորվեն հենց օրենսդրի կողմից (որոշման օրինական ուժը, սովորական դատական կարգի սպառումը և սահմանադրական բողոքի ընդունման հատուկ ընթացակարգը), սակայն, ընդհանուր առմամբ, օրենսդրի կողմից դատավարական կարգավորում չի տրվել: Օրենսդիրը գիտակցաբար ձեռնպահ է մնացել բոլոր տարրերը կարգավորելուց: Այդ առավելության հիման վրա Դաշնային սահմա-

www.journal.lawinstitute.am

նադրական դատարանը բնութագրվում է որպես դատավարության «տեր», որը լայն ծավալով կարող է ձևավորել իր սեփական ընթացակարգը: Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանում դատավարության հատուկ կարգի սահմանումը նպաստում է դատարանի իրավասության ավելի արդյունավետ իրականացմանը, քանի որ յուրաքանչյուր վարույթի համար հատուկ կանոններ ձևավորելու միջոցով հաշվի են առնվում դատական քննության բնույթը, մասնակիցների կազմը և առարկան: Առանց Ազգային ժողովի միջամտության անհրաժեշտության սահմանադրական դատարանի կողմից իր վարույթի կանոնները սահմանելու հնարավորությունը կարևոր է նույնիսկ դատարանի անկախության տեսանկյունից:

Սահմանադրական դատավարության բովանդակությունը կազմում է դատական սահմանադրական վերահսկողությունը, այսինքն՝ դատական գործունեությունը՝ ուղղված իրավասու մարմինների և անձանց դիմումների հիման վրա սահմանադրության մեկնաբանության շրջանակներում նորմերի սահմանադրականության ստուգմանը: Դատական սահմանադրական վերահսկողության գլխավոր տարբերությունները սահմանադրական վերահսկողության այլ ձևերից նրանք են, որ դատարանի կողմից նման գործունեությունն իրականացվում է խիստ դատավարական կանոններով, արդարադատության սահմանադրական սկզբունքների հիման վրա, և ընդունված որոշումները պարտադիր են իրավունքի բոլոր սուբյեկտների համար:

Ե. Լուկյանովն առաջարկում է դատավարական իրավահարաբերությունների բովանդակության տակ հասկանալ դրա սուբյեկտների կազմը, որն արտահայտվում է սուբյեկտիվ իրավունքներով և իրավաբանական պարտականություններով, իրավաբանական լիազորություններով, իրավաբանական պատասխանատվությամբ և իրենց համապատասխանող փաստացի վարքագծով<sup>10</sup>: Ն. Չեչինան գտնում է, որ «Դատավարական հարաբերությունները գտնվում են մշտական շարժման մեջ, քանի որ յուրաքանչյուր իրավահարաբերության ծագման հնարավորությունը պայմանավորված է իրեն ժամանակային առումով նախորդող իրավահարաբերության ծագմամբ, փոփոխմամբ և դադարեցմամբ, իսկ այդ հարաբերությունն իր հերթին կանխորոշում է այլ ինքնուրույն դատավարական հարաբերություններ ծագելու, գարգանալու կամ դադարելու հնարավորությունը»:

Քանի որ սահմանադրական դատավարությունն իրենից ներկայացնում է որոշակի գործընթաց, ուստի անխուսափելի է դրանում միմյանց հետ փոխկապված փուլերի առանձնացումը: Դատավարական հարաբերությունների յուրաքանչյուր փուլ ունի առանձնահատուկ բնույթ՝ պայմանավորված իրավահարաբերության օբյեկտով, փուլի մասնակիցների սուբյեկտային կազմով և դա-

տավարական գործողությունների նպատակով:

Ն. Վիտրուկը, իսկ այնուհետև՝ Ա. Բեգուզովը և Ս. Սոլդատովը, ի տարբերություն գիտնական-դատավարագետների մոտեցման, որ սահմանադրական դատավարության փուլի տակ հասկանում են ընդհանուր ուղղվածություն ունեցող դատավարական գործողությունների ամբողջություն, առաջարկեցին սահմանադրական դատավարության փուլի այլ սահմանում. «Սահմանադրական դատավարության փուլը սահմանադրական դատարանի և սահմանադրական դատավարության մասնակիցների՝ ժամանակի մեջ ընթացող և կոնկրետ իրավական իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների համեմատաբար փակ համալիր է»<sup>12</sup>: Այլ հեղինակների կողմից տրված բնորոշման համաձայն՝ սահմանադրական դատավարության փուլը սահմանադրական դատարանի և մասնակիցների գործողությունների հարաբերականորեն փակ ամբողջություն է, որը տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածի ընթացքում և ուղղված է կոնկրետ իրավական խնդրի լուծմանը<sup>13</sup>: Վերջին բնորոշումը, մեր կարծիքով, առավել ամբողջական է արտացոլում սահմանադրական դատավարության փուլի էությունը՝ շեշտադրելով սահմանադրական դատարանի և դատավարության մասնակիցների կողմից որոշակի իրավական խնդիր լուծելու մտադրությունը:

Գրականության մեջ տարբեր մոտեցումներ են առկա սահմանադրական դատավարության փուլերի քանակի վերաբերյալ: Ն. Վիտրուկն առանձնացնում է դատասահմանադրական վարույթի հետևյալ փուլերը՝ Ռ-Գ սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելը և դրա ուսումնասիրումը Ռ-Գ սահմանադրական դատարանի քարտուղարության կողմից, դիմումի նախնական ուսումնասիրությունը և դրա ընդունումը (կամ դիմումը քննության ընդունելու մերժումը), դատական քննության նախապատրաստելը, դատական քննությունը, եզրափակիչ որոշման ընդունումը, դրա հայտարարումը, հրապարակումը և ուժի մեջ մտնելը, Ռ-Գ սահմանադրական դատարանի որոշման կատարումը<sup>14</sup>: Ժ. Հովսեփյանը դատասահմանադրական վարույթի՝ Վիտրուկի կողմից առանձնացված փուլերին ավելացնում է «դատարանի որոշման գործողության» փուլը, ինչպես նաև որպես առանձին փուլ է դիտարկում «դատարանի՝ հայտարարություններ ներկայացնելը (հարցումներ, միջնորդություններ, բողոքներ, հայցեր)», իսկ «Ռ-Գ սահմանադրական դատարանի որոշումների կատարման» փուլի փոխարեն առաջարկում է «դատարանի որոշման և դրա կատարման մասին տեղեկացնելու» փուլը<sup>15</sup>: Ի տարբերություն վերը նշված հեղինակների կողմից տրված փուլերի՝ Ս. Նարրուտոն սահմանում է սահմանադրական դատավարության ութ փուլ՝ քարտուղարության կողմից դիմումի նախնական ուսումնասիրում, սահմանադրական դատարանի

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

նախագահի հանձնարարությամբ դիմումի նախնական ուսումնասիրում դատավորի (դատավորների) կողմից, դատարանի կողմից դիմումը քննության ընդունելը կամ քննության ընդունումը մերժելը, որը հանգեցնում է սահմանադրական դատավարության դադարեցմանը, քննության ընդունված դիմումի դատաքննության նշանակումը և դրան նախապատրաստվելը, սահմանադրական դատարանի կողմից գործն ըստ էության քննելը, եզրափակիչ որոշման ընդունումը, դատարանի որոշման պարզաբանումը (այլընտրանքային փուլ), իրավակիրառ մարմինների կողմից սահմանադրական դատարանի որոշման կատարումը<sup>16</sup> : Ընդ որում, հեղինակի կողմից սահմանադրական դատարան դիմում ներկայացնելը չի դիտարկվում որպես առանձին փուլ: Ա. Մագուրովն առանձնացնում է նույն փուլերը, բացառությամբ «իրավակիրառ մարմինների կողմից սահմանադրական դատարանի որոշման կատարմանը»: Միաժամանակ, վերջինս ընդգծում է, որ սահմանադրական դատավարության այնպիսի փուլը, ինչպիսին «սահմանադրական դատարան դիմում ներկայացնելուց հետո քարտուղարության կողմից դրա նախնական ուսումնասիրությունն է», պետք է որպես առանձին փուլ դիտարկել որոշակի վերապահումներով, քանի որ քարտուղարությունը չի իրականացնում դատական իշխանություն, սակայն բազմաթիվ դիմումներով հենց ինքն է առաջարկում ՌԴ սահմանադրական դատարանի որոշման նախագիծ, և շատ դեպքերում փաստացի հենց քարտուղարությունն է մերժում դատարանի կողմից դիմումի քննության ընդունումը, եթե դիմողը չի պնդում, որ դիմումի ընդունելության հարցի քննությունը իրականացվի դատարանի կողմից :

Վերը նշված բոլոր հեղինակները, բացառությամբ Ա. Մագուրովի, առանձնացնում են ՌԴ սահմանադրական դատարանի որոշումների կատարումը՝ որպես սահմանադրական դատավարության ինքնուրույն փուլ: Թեև սահմանադրական դատարանի որոշումների կատարումը կախված է պետական բազմաթիվ այլ մարմինների գործողություններից՝ դատարանների կողմից դատական ակտերի վերանայում, ՀՀ Ազգային Ժողովի կողմից օրենսդրական փոփոխությունների և լրացումների կատարում և այլն, այնուամենայնիվ, ՀՀ սահմանադրական դատարանը տարեկան հաղորդումներ է հրապարակում իր կողմից ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, որ որոշակի հետազոտություն է ենթադրում և կարող է կիրառվել, օրինակ, ՀՀ արդարադատության խորհրդի կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ սահմանադրական դատավարությունն իրենից ներկայացնում է Սահմանադրությամբ, օրենքով և սահմանադրական դատարանի կանոնակարգով կարգավորվող, սահմանադրական դատարանի և դատավարության այլ մասնակիցների (սուբյեկտների) միջև ծագող դատավարական հարաբերությունների ամբողջություն, որոնք միջնորդավորում են նրանց դատավարական գործողությունների հաջողականությունը, ուղղված են պետության և հասարակության մեջ սահմանադրականության հաստատման նպատակով սահմանադրական դատարանի լիազորություններին համապատասխան այս կամ այն տեսակի գործ լուծելիս օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը:

Սահմանադրական դատավարության փուլը սահմանադրական դատարանի և մասնակիցների գործողությունների հարաբերականորեն փակ ամբողջություն է, որը տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածի ընթացքում և ուղղված է կոնկրետ իրավական խնդրի լուծմանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել ՀՀ սահմանադրական դատավարության հետևյալ փուլերը.

- ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից դիմումի նախնական ուսումնասիրությունը,
  - դատական կազմի կամ սահմանադրական դատարանի լիազույնար կազմի կողմից գործի քննության ընդունելության հարցի լուծումը,
  - գործը դատաքննության նախապատրաստելը,
  - դատական քննությունը,
  - խորհրդակցական սենյակում քննարկումը, քվեարկությունը և ըստ էության որոշման ընդունումը,
  - որոշման հրապարակումը և ուժի մեջ մտնելը,
  - ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարումը (որոշակի վերապահումներով):
- Սահմանադրական դատավարության առանձնահատկություններից մեկը դրա հնարավոր սուբյեկտների բազմազանությունն է, որոնց պահանջները հանրային իրավական ոլորտում են գտնվում, ի տարբերություն քաղաքացիական և արբիտրաժային դատավարությունների, որտեղ մասնակիցները պաշտպանում են անձնական շահերը : Անհրաժեշտ է անդրադառնալ սահմանադրական դատավարությանը բնորոշ որոշ առանձնահատկություններին, որոնք իրենց ազդեցությունն են թողնում սահմանադրական դատավարության սուբյեկտների շրջանակի ձևավորման վրա և որոշում են դատավարության տվյալ տեսակին նրանց մասնակցության առանձնահատկությունները: Սուբյեկտների սահմանադրատավարական գործունեության ընդհանուր հատկանիշն այն է, որ դրանց իրավունքների և պարտականությունների բնույթի և բովանդակության, ինչպես նաև իրենց կողմից իրականացվող գործառնությունների բոլոր տարբերություններով հանդերձ, դրանք մասնակցում են սահմանադրական քննությանը, իսկ դրանց մասնակ-*

ցությունն արտահայտվում է այնպիսի դատավարական գործողությունների կատարմամբ, որոնց ամբողջությունը կազմում է սահմանադրական դատավարությունը<sup>19</sup> : Ընդ որում, սահմանադրական դատավարությունում սուբյեկտների մասնակցությունն ունի տարբեր նպատակային ուղղվածություն՝ կանխորոշելով դատավարական կարգավիճակի տարբերությունները: Այսպես, կողմերը և նրանց ներկայացուցիչները դատավարությանը մասնակցում են՝ պաշտպանելու որոշակի շահեր՝ կապված կամ Սահմանադրության գերակայության ապահովման հետ, կամ իրենց սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության հետ: Ընդհանուր առմամբ, կողմերի շահերն իրենց ազդեցությունն են թողնում դատավարության և դրա արդյունքի վրա. առանց դրա ընդհանրապես հնարավոր չէ սահմանադրական դատավարության իրականացումը:

Ամբողջովին այլ կերպ են դատավարությանը ներգրավվում վկաները, փորձագետները և թարգմանիչները: Նրանք իրականացնում են որոշակի պարտականություններ, օգտվում են որոշակի իրավունքներից, որոնց առնչությամբ էլ իրականացնում են դատավարական գործողությունները, սակայն նրանք սահմանադրական դատավարության մեջ չունեն մշտական դերակատարություն, քանի որ նրանց դատավարական գործողությունները ծառայում են կամ որպես ապացուցման միջոց (վկաներ, փորձագետներ), կամ որպես սահմանադրադատավարական գործունեության մասնակիցների միջև շփման միջոց (թարգմանիչներ): Այդ գործողությունները կրում են դրվագային բնույթ. վկաները, փորձագետները, թարգմանիչներն ընդգրկվում են դատավարության միայն մի փուլում՝ գործն ըստ էության քննելիս, իսկ ցուցմունք, փորձագիտական եզրակացություն տալու և թարգմանելու իրենց պարտականությունները կատարելուց անմիջապես հետո դուրս են գալիս դատավարությունից: Տվյալ սուբյեկտների օժանդակող դերակատարությունը թույլ չի տալիս նրանց դատավարական կարգավիճակը հավասարեցնել կողմերին և վերջիններիս ներկայացուցիչներին: Դեռ ավելին, որոշ գիտնական-դատավարագետներ վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին չեն դիտարկում որպես<sup>20</sup> դատավարական գործունեության սուբյեկտներ :

Որպես սահմանադրական դատավարության կողմերից մեկը՝ միշտ հանդես են գալիս պետական մարմինները, իսկ դատարանի որոշումները միշտ ունենում են հանրային-իրավական նշանակություն և իրենցից հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն տվյալ կոնկրետ դեպքի համար: Ժ. Հովսեփյանը մատնանշում է այն հանգամանքը, որ սահմանադրական դատավարության մասնակիցների սուբյեկտային կազմը, որպես կանոն, ամրագրված և սահմանափակված է ինչպես սեռային, այնպես էլ

տեսակային թվարկմամբ, այսինքն՝ սահմանադրական դատավարության վերաբերյալ հատուկ օրենսդրությամբ ամրագրված են ֆիզիկական անձանց, կոնկրետ պետական մարմինների, պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց կոնկրետ խմբերը, որոնք կարող են լինել հնարավոր մասնակիցներ<sup>21</sup> : Մինչդեռ կարելի է խոսել բազմաթիվ անձանց, մարմինների, կազմակերպությունների մասին, որոնք ներառվում են այդ խմբերի մեջ և, ամենայն հավանականությամբ, կարող են դառնալ սահմանադրական դատավարության մասնակից: Այսպիսով, սահմանադրական դատավարության հանրային-իրավական բնույթն ազդում է իր մասնակիցների սուբյեկտային կազմի և սահմանադրական դատավարությունում նրանց մասնակցության առանձնահատկությունների վրա:

Սահմանադրական դատավարությունում ունեցած դերի, գործի քննության ընթացքի վրա ազդելու հնարավորությունների, գործի ելքով շահագրգռված լինելու չափանիշներից ելնելով՝ Վ. Կրյաժկովը և Լ. Լազարևն առանձնացնում են սուբյեկտների երեք խումբ՝ սահմանադրական դատարանը՝ որպես արդարադատություն իրականացնող մարմին, կողմերը՝ գործի ելքով անմիջականորեն շահագրգռված անձինք, և մարմինները՝ անձինք, որոնք ներգրավվում են գործի մասնակցելուն սահմանադրական արդարադատության իրականացմանն աջակցելու նպատակով՝ վկաներ, փորձագետներ, թարգմանիչներ<sup>22</sup> : Նույն հեղինակները նշում են, որ կողմերի ներկայացուցիչներն օրենքով առանձնացվում են որպես դատավարության մասնակից, սակայն նրանք չեն կարող որակվել որպես սահմանադրական դատավարության պարտադիր և ընդհանրական սուբյեկտներ, քանի որ կողմը կարող է իր իրավունքներն իրականացնել առանց ներկայացուցչի: Իսկ այն դեպքերում, երբ նաև ներկայացուցիչ է ներգրավվում, կողմը համակարգում է ներկայացուցչի ջանքերը, չի կորցնում նրա հետ համատեղ հանդես գալու հնարավորությունը, կարող է հրաժարվել նրա ծառայություններից<sup>23</sup> : Սակայն, մեր կարծիքով, կողմի ներկայացուցիչը հանդիսանում է սահմանադրական դատավարության լիարժեք մասնակից, քանի որ որոշ դեպքերում կողմը չի կարող իրականացնել իր լիազորություններն առանց ներկայացուցչի: Դա վերաբերում է, օրինակ, անչափահասների օրինական ներկայացուցչի մասնակցության դեպքին, պետական մարմնին անմիջականորեն ղեկավարի կողմից ներկայացնելու դեպքին, ի պաշտոնե իշխանության մարմնի ներկայացուցչի դեպքին: Մնացած դեպքերում կարելի է համաձայնել նշված հեղինակների կարծիքին:

Գիտական գրականության մեջ առանձնացվում է սուբյեկտների նաև լրացուցիչ խումբ, որոնք իրենց կարգավիճակով չեն հանդիսանում դատավարության մասնակիցներ և չեն ազդում գործի քն-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

նության ընթացքի վրա, սակայն սահմանադրական դատարանի հետ մտնում են սահմանադրական դատավարության հետ կապված որոշակի իրավահարաբերությունների մեջ: Այդ սուբյեկտների թվին են պատկանում մասնագետները, հրավիրված անձինք (գործի ելքով վերջիններիս շահագրգռվածությունը կարող է պայմանավորված լինել ինչպես իրենց սահմանադրական կարգավիճակով, այնպես էլ այլ հանգամանքներով), մարմինները կամ անձինք, որոնց օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարանը կարող է որոշակի պահանջներ ներկայացնել, ինչպես նաև նիստերի դահլիճում ներկա քաղաքացիները (նրանք, ովքեր չեն պահպանի սահմանված կանոնները, կարող են հեռացվել նիստերի դահլիճից կամ ենթարկվել որոշակի տուգանքի)<sup>24</sup>: Ընդհանուր առմամբ, աջակցելով նման դիրքորոշմանը, նշենք, որ, մեր կարծիքով, մասնագետը պետք է ներառվի այն անձանց շարքում, ովքեր ընդգրկվում են գործի քննությանը՝ սահմանադրական դատավարության իրականացման աջակցելու նպատակով: Սահմանադրական դատավարությանը սուբյեկտի մասնակցության աստիճանից կախված՝ Վ. Ի. Բիսունովն առանձնացնում է երկու խումբ՝ պարտադիր և ֆակուլտատիվ (ոչ պարտադիր)<sup>25</sup>: Առաջին խմբի մեջ են մտնում այն սուբյեկտները, առանց որոնց հնարավոր չէ սահմանադրական դատավարությունը, սահմանադրական դատարանը, որը սահմանադրական դատավարությունում իրականացնում է գլխավոր գործառույթը՝ սահմանադրական արդարադատությունը, կողմերը, որոնց գործողությունները և շահերը հակադրվում են միմյանց: Երկրորդ խումբը ներկայացվում է ֆակուլտատիվ (ոչ պարտադիր) մասնակիցներով: Դրանք են կողմերի ներկայացուցիչները, փորձագետները, թարգմանիչները, վկաները, մասնագետները, դատարանի գործունեությունն ապահովող աշխատակիցները:

Սահմանադրական դատավարության սուբյեկտն այն պետական մարմինն է, պաշտոնատար անձը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը սահմանադրադատավարական իրավունքի նորմերի ուժով օժտված է սուբյեկտիվ դատավարական իրավունքներով և պարտականություններով և դրանք իրացնում է սահմանադրական դատավարության ընթացքում: Սահմանադրական դատավարության սուբյեկտների կազմի մեջ, բացի սահմանադրական դատարանից, ներառվում են նաև սահմանադրական դատավարության մասնակիցները, որոնք օժտված են սահմանադրադատավարական իրավասուբյեկտությամբ՝ իրավունակությամբ և գործունակությամբ:

*Սահմանադրական դատավարության նպատակներին հասնելու տեսանկյունից կարևոր խնդիր է նաև սահմանադրական դատարանի որոշումներում իրավական փաստարկման հիմնախնդիրը:*

Իրավական փաստարկումը փաստարկում է

այն մասին, որ կիրառված իրավական դատողությունները ճիշտ են (կամ իրավաչափ)<sup>26</sup>: ՀՀ սահմանադրական դատարանի ըստ էության բոլոր որոշումներով սահմանադրական դատարանն ստիպված է մեկնաբանել և՛ Սահմանադրության նորմը, և՛ օրենքի վիճարկվող դրույթը՝ կիրառելով մեկնաբանման բազմաթիվ մեթոդներ, ուսումնասիրել իրավակիրառական պրակտիկան, որից հետո միայն ձևակերպել սահմանադրաիրավական վեճի վերաբերյալ իր դիրքորոշումը՝ ներկայացնելով նաև այն իրավական փաստարկները, որոնք դրվում են իրավական դիրքորոշումների հիմքում: Մեկնաբանող որոշումը պետք է լինի հիմնավորված որոշում: Նման որոշումները հիմնավորվում են մեկնաբանման չափորոշիչներ կիրառելու և/կամ դրանց հիման վրա գնահատականներ տալու ճանապարհով: Գրականության մեջ մեկնաբանման չափորոշիչների երկու մակարդակ է տարանջատվում: Առաջին մակարդակը սահմանում է, թե ինչպես պետք է մեկնաբանողը կիրառի լեզվական, համակարգային և գործառական մեկնաբանման առանձնահատկությունները՝ որոշելու նորմ-ձևակերպման բովանդակությունը: Մեկնաբանման չափորոշիչների երկրորդ մակարդակը որոշում է, թե ինչպես պետք է առաջին մակարդակի չափորոշիչները կիրառվեն, և ինչպես պետք է լուծվեն դրանց կիրառման արդյունքում առաջացող բախումները: Երկու մակարդակների չափորոշիչներն էլ ընտրվում և կիրառվում են համապատասխան գնահատականների միջոցով<sup>27</sup>:

Իրավական փաստարկումը հանդիսանում է փաստարկման տեսության յուրահատուկ դրսևորումներից մեկը: Ռ. Ալեքսիի կարծիքով իրավական փաստարկումը կարող է լինել հետևյալ տեսակների՝ իրավական (դոգմատիկ) փաստարկ, բանավեճ դատարանում, օրենսդիր մարմնում (հանձնաժողովում) քննարկում իրավական հարցերի վերաբերյալ, բանավեճեր ուսանողների, իրավաբանների, կառավարության կամ կազմակերպությունների իրավախորհրդատուների միջև, ինչպես նաև լրատվամիջոցների քննարկումները համապատասխան իրավական հարցերի վերաբերյալ՝ զուգորդված իրավական փաստարկների հատկանիշներով: Իրավական փաստարկմանն անհագստացնում է, թե ինչպես ապացուցել համապատասխան իրավական առաջարկների ճիշտ և իրավաչափ լինելն այնպիսի եղանակով, որը կհամապատասխանի տրամաբանությանը, փաստին և ողջամտությանը հետևյալ ոլորտներում՝ օրենսդրի կարծիք, դատական ակտ<sup>28</sup>, դատարանում մասնակցող կողմի փաստարկներ<sup>29</sup>: Առաջարկելով որոշակի ապացույց կամ պատճառ՝ իրավական փաստարկումը կիրառում է հաստատման կամ հերքման մեթոդը, որպեսզի ցույց տրվի որոշակի իրավական դիրքորոշման, իրավական հայեցակարգի կամ որոշման օրինականությունը և լեգիտիմությունը:

Իրավական փաստարկման տեսության նպատակն է երաշխավորել, որպեսզի իրավական փաստարկման մասնակիցները կարողանան իրավական հարցերը քննարկել ողջամիտ ճանապարհով և խուսափել կամայականություններից դատական որոշումներ կայացնելիս<sup>30</sup> :

Երբ իրավական հարց լուծելիս դատավորը լուծում է մեկնաբանման հիմնախնդիր, իր որոշումն արդարացնելու համար նա կարող է ընտրել փաստարկների տարբեր տեսակներ: Դատավորները պարտավոր են ոչ միայն պատշաճ մակարդակով լուծել մեկնաբանման խնդիրը, այլ նաև պարտականություն ունեն սահմանելու մեկնաբանման ենթակա հարցերին տրված պատասխանների հիմքերը: Սակայն գործնականում այս հիմքերը միշտ չէ, որ որոշակի են, հստակ և պատշաճ կարգով են ներկայացվում: Երբեմն դատավորը չի ներկայացնում այն ամենը, ինչն անհրաժեշտ է իր որոշումն արդարացնելու համար (օրինակ՝ դատավորն այդ փաստը համարում է ակնհայտ), այլ դեպքերում նա կիրառում է փաստարկներ, որոնք անհրաժեշտ չեն որոշումը հիմնավորելու համար: Ընթերցողը, ով ուզում է գնահատել այս հիմքերը՝ պատճառները, պետք է դրա համար լուծի մի շարք վերաձևակերպման խնդիրներ: Առաջին՝ նա պետք է գտնի փաստարկումը որպես այդպիսին: Սա նշանակում է, որ նա պետք է պարզի, թե արդյոք իրավական որոշման որոշակի հատվածում այդ փաստարկումն ակնհայտ է, և ինչ գործառույթ է իրականացնում այդ փաստարկումը: Երկրորդ՝ նա պետք է մեկնաբանի փաստարկումը, ինչը նշանակում է, որ նա պետք է որոշի, թե ինչ դատողություն է տեքստում պաշտպանվում՝ որպես դիրքորոշում, և ինչ դատողություններ են առաջ քաշվում՝ որպես դիրքորոշումը հիմնավորող հստակ փաստարկներ, և ինչ ոչ հստակ արտահայտված փաստարկներ են ենթադրվում: Երրորդ՝ նա պետք է վերլուծի փաստարկումը, ինչը նշանակում է, որ նա պետք է ուսումնասիրի, թե փաստարկներն ինչ նշանակություն ունեն միմյանց, ինչպես նաև իրավական դիրքորոշման համար :

Վան Էմերենի և Գրուբենդորստի կարծիքով դատողությունների երեք հիմնական տեսակ պետք է տարբերակվի՝ նկարագրական, գնահատողական և խրախուսող: Նկարագրական դատողությունները նկարագրում են փաստերը կամ երևույթները: Գնահատողական դատողություններն արտահայտում են որոշակի գնահատական փաստերի կամ երևույթների վերաբերյալ: Խրախուսող դատողությունները մեզ կոչ են անում կանխել որոշակի երևույթ կամ գործողության ուղղվածություն : Կարծում ենք, որ երրորդ խմբի մեջ մտնում են ոչ միայն որոշակի վարքագիծ կանխելու կոչերը, այլ նաև որոշակի ակտիվ վարքագիծ դրսևորելու կոչերը:

Գրականության մեջ տարբերակվում են նաև

ձևական և բովանդակային փաստարկներ: Ձևական փաստարկներն այն փաստարկներն են, որոնք կիրառվում են օրենքը մեկնաբանելու համար և ցույց տալու, թե ինչպիսին է այն: Այս ձևական փաստարկները բացառում են բովանդակային մեկնաբանողական փաստարկներն այն մասին, թե ինչպիսին պետք է լինի օրենքը<sup>31</sup> : Փաստարկների մասին կարելի է խոսել՝ նկատի ունենալով օրենքների նորմերը, նախադեպերը, իրավական սկզբունքները և մեկնաբանման մեթոդները: Ձևական փաստարկները կարող են դիտարկվել որպես բացառող հիմնավորումներ: Դրանց իշխանական բնույթը, սկզբունքորեն, բացառում է ոչ ձևական հակափաստարկները<sup>32</sup> : Բովանդակային փաստարկներն ապահովված չեն իշխանական ուժով: Այս տեսակի փաստարկները ներառում են բարոյական, քաղաքական, տնտեսական կամ այլ սոցիալական բնորոշումների վրա ուղղակի հղումներ: Բովանդակային փաստարկները չունեն բացառող բնույթ: Մրանք կարող են հակասել ձևական փաստարկներին կամ այլ բովանդակային փաստարկներին: Բովանդակային փաստարկման շրջանակներում առկա է, այսպես ասած, «փաստարկի ավելի լայն շրջանակ» կամ «անհամաձայնության ավելի լայն տարածք»<sup>33</sup> :

Փաստարկումը կենտրոնական դեր ունի իրավունքի մեջ, և պատճառաբանումը կենտրոնական դեր է խաղում իրավական համակարգի ձևավորման հարցում: Օրենքով կարող են սահմանվել բազմաթիվ պահանջներ, թե ինչպիսին պետք է լինեն որոշումները, սակայն սա չի կարող սպառիչ կարգավորում լինել: Այս տեսանկյունից արդիական է դառնում այն հարցը, թե ինչպես վերահսկել դատական հայեցողությունը, մասնավորապես՝ ինչպես սահմանափակել իրավական որոշումներ կայացնողների գնահատողական ազատությունը: Հետևաբար, անհրաժեշտ է որոշումների կայացման արդարացիությունը գնահատելու տեսական չափորոշիչներ մշակել: Փաստարկման տեսանկյունից պատճառաբանվածությունը պետք է դիտարկվի որպես դիալեկտիկական ողջամտության ձև: Վերջինս առաջ է քաշում այնպիսի կապակցող և փոխգործակցության սկզբունքներ, ինչպիսիք են տրամաբանվածությունը, ընդհանրացվածությունը, արդյունավետությունը, ստուգելիությունը, արդյունքների ընդունելի լինելը և անկեղծությունը : Որոշակիության և պատճառաբանվածության վերաբերյալ ավանդական մոտեցումը քննադատվում է, քանի որ այն միակողմանի է և ոչ ամբողջական: Այս խնդիրը կարող է լուծվել, եթե ներդրվի այլընտրանքային՝ փաստարկման վրա հիմնված մոտեցումը, որն ավելի ուշադիր է իրավունքում պատճառաբանվածության կառուցվածքի, դերի և ձևերի նկատմամբ ու ապահովում է փաստարկման ինչպես վերլուծական, այնպես էլ նորմատիվ հիմքերը: Փաստարկման վրա կենտրոնանալը հնարավորու-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

թյուն է տալիս մեզ ընկալել որոշակիության և պատճառաբանվածության կարևոր հատկանիշներ, որոնք մեծամասամբ պնտեսվել էին պոզիտիվիստական տեսանկյունից<sup>37</sup> : Հարթը ընդունում էր, որ մեզ համար հնարավոր է սահմանագծին բացառել անորոշությունը, այսինքն՝ *«դրույթի իմաստն այնպես ամրագրել, որ դրա ընդհանուր դրույթները նույն իմաստն ունենան բոլոր այն դեպքերում, երբ դրա կիրառման հարց է բարձրանում»*<sup>38</sup>: Սակայն գործնականում հաճախ կարելի է հանդիպել մեկնաբանման բովանդակության խեղաթյուրման: Ինչպես Լեյզերը և Վրանկենն են նշում, ընդհանուր իրավունքի երկրների իրավական որոշումների բնութագրիչներից է այն, որ օրենքի հարմարեցնելը կոնկրետ իրավիճակին ներկայացվում է որպես գործող օրենքի մեկնաբանություն<sup>39</sup> :

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը նույնպես նախատեսում է դատարանի որոշումներին ներկայացվող որոշակի պահանջներ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածը, որը նվիրված է որոշումների և եզրակացությունների շարադրանքին, սահմանում է, ի թիվս այլ պահանջների, հետևյալ պահանջները.

«1. Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, պարունակում է հետևյալ տեղեկությունները.

8) **դատարանի ընդունած որոշումը կամ եզրակացությունը հիմնավորող իրավական դիրքորոշումները, այդ թվում՝ նաև այն փաստարկները, որոնք հաստատում կամ հերքում են կողմերի պնդումները**»:

Թեև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը չի կանոնակարգում, թե փաստարկման ինչ տեսակներից պետք է օգտվի սահմանադրական դատարանը, այնուամենայնիվ, ՀՀ սահմանադրական դատարանի բազմաթիվ որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ սահմանադրական դատարանը, կիրառելով մեկնաբանման բազմաթիվ մեթոդներ, որպես կանոն, կիրառում է բովանդակային փաստարկման տեսակը, որը նրան հնարավորություն է տալիս առավել ամբողջական անդրադառնալ սահմանադրաիրավական վեճի լուծմանը: ՀՀ սահմանադրական դատարանն իր 15 ապրիլի 2008 թվականի թիվ ՍԳՌ-751 որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. *«Ինչպես վիճարկվող դրույթում ամրագրված ընդհանուր կանոնի, այնպես էլ վերոհիշյալ բացառությունների հիմքում ընկած է հետևյալ տրամաբանությունը. սահմանադրական դատարանի որոշումներին հետադարձ ուժ կարող է տրվել այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է որոշակի կենսական շահերի պաշտպանության նպատակով, և երբ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, քննության առնելով այդ կենսական շահերի պաշտպանության անհրաժեշտության հարցը, հիմնավորված և պատ-*

*ճառաբանված որոշում է կայացնում իր որոշմանը հետադարձ ուժ տալու մասին*»: Գատարանն ընդհանուր կանոնի և բացառության համեմատական վերլուծության արդյունքում դուրս է բերում դրանց տարբերակման տրամաբանությունը և ցույց է տալիս, թե ինչ նպատակի հասնելու համար է բացառությունը նախատեսված, ու ինչպես պետք է այդ կանոնը կիրառվի: Հաճախ կիրառվող եզրույթների տառացի մեկնաբանման անբավարար լինելու պատճառով է դատարանը ստիպված դիմել մեկնաբանման և դրա հիման վրա մեկնաբանողական փաստարկման հնարքներին: Օրինակ, դատարանն իր ՍԳՌ-751 որոշման մեջ նախ ցույց է տալիս, թե ինչպիսին է օրենքը, այնուհետև ներկայացնում, թե ինչպիսին այն պետք է լինի՝ ներկայացնելով նաև իրավական հիմնավորումներ դրանց նպատակի վերաբերյալ:

Իր պրակտիկայում սահմանադրական դատարանը հաճախ, պայմանավորված նաև գործի բարդության աստիճանից, իր որոշումներում ամրագրում է նաև այն հարցերի շրջանակը, որոնց պատասխանելուց հետո միայն հնարավոր կլինի լուծել բարձրացված սահմանադրաիրավական վեճը: Այս հանգամանքն ընթերցողին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե հարցերի ինչ ծավալ և շրջանակ պետք է հետազոտվի, որոնք են այն ուղիները, որոնք հանգեցնելու են խնդրի լուծմանը, ինչ տրամաբանական հաջորդականությամբ է սահմանադրական դատարանը պատրաստվում լուծել խնդիրը, ինչպես, օրինակ, սահմանադրական դատարանի 24 ապրիլի 2009 թվականի թիվ ՍԳՌ-24 որոշումը և այլն:

Քանի որ սահմանադրական դատավարության սկզբունքներից մեկը գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքն է, դատարանը հստակեցնում է, թե ինչ հանգամանքներ են պետք պարզել, որոնք անհրաժեշտ և բավարար կլինեն իրավաբանորեն ճիշտ փաստարկված և արդարացի որոշում կայացնելու համար:

Ամփոփելով իրականացված վերլուծությունը՝ գալիս ենք այն եզրահանգումներին, որ սահմանադրական դատարանը կիրառում է ինչպես ձևական, այնպես էլ բովանդակային փաստարկներ: Սակայն այդ փաստարկները պետք է ուղղված լինեն ոչ թե օրենքի դրույթը կոնկրետ իրավիճակին հարմարեցնելուն, այլ դրույթը մեկնաբանելուն, որը հավասարապես կիրառելի կլինի այլ իրավիճակների նկատմամբ: Սահմանադրական դատարանը, ելնելով իր կողմից լուծվող խնդիրների առանձնահատկություններից, իր որոշումներում առավելապես կիրառում է բովանդակային փաստարկման տեսակը, քանի որ նրա համար անխուսափելի է իրավական նորմերի մեկնաբանումը. սահմանադրական դատարանն ինքն է որոշում կիրառվող փաստարկների շրջանակը՝ հստակեցնելով լուծման ենթակա խնդիրները: Գատարանի կողմից կիր-

բառվող փաստարկներից յուրաքանչյուրն իր նշանակությունն ունի իրավական համակարգի համար և ուղղված է կոնկրետ հասցեատերերի :

- <sup>1</sup> Տե՛ս Н. В. Витрук. Конституционное правосудие: судебно-конституционное право и процесс, Москва, Юрист, 2005, С. 51.
- <sup>2</sup> Տե՛ս Р. С. Ярускин, Система процессуальных форм федерального судебного конституционного контроля в России : Современное состояние, перспективы совершенствования: Автореферат дис. кандидата юридических наук. -М.,2005. С. 10.
- <sup>3</sup> Ընգծումը կատարվել է մեր կողմից:
- <sup>4</sup> Տե՛ս Н.С. Райкова, Сущность конституционного судопроизводства //Журнал конституционного правосудия, 2008. No.5. С. 10.
- <sup>5</sup> Տե՛ս Н. В. Витрук, Л. В. Лазарев, Б. С. Эбзеев, Федеральный конституционный закон «О Конституционном Суде РФ». Комментарий, М., Юрид. лит., 1996, С. 220-221.
- <sup>6</sup> Տե՛ս В. А. Кряжков, Л. В. Лазарев, Конституционная юстиция в Российской Федерации. М., 1998. С. 148.
- <sup>7</sup> Տե՛ս М. А. Свистунова, Судебный конституционный контроль в Федеративной Республике Германии. Автореферат дисс. на соиск. уч. степени кандидата юр. наук, Москва 2007, С. 39.
- <sup>8</sup> Տե՛ս OPINION ON AMENDMENTS TO THE LAW ON THE CONSTITUTIONAL COURT OF ARMENIA, EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW, Strasbourg, 22 June 2006, Opinion no. 376/2006, CDL-AD(2006)017, 19-րդ կետ:
- <sup>9</sup> Տե՛ս С.А. Мукасева, Формы закрепления принципа состязательности в правотворческой практике, [http://www.superinf.ru/view\\_helpstud.php?id=1533](http://www.superinf.ru/view_helpstud.php?id=1533) 15.02.2013:
- <sup>10</sup> Տե՛ս Е. Г. Лукьянова. Теория процессуального права. М., НОРМА, 2003. С. 219.
- <sup>11</sup> Տե՛ս Н. А. Чечина. Гражданские процессуальные отношения. Л., Ленинг. Ун-та, 1962. С. 56.
- <sup>12</sup> Տե՛ս Н. В. Витрук, Конституционное правосудие судебное конституционное право и процесс. Учебное пособие М ЮНИТИ 1998, С. 219; А. А. Безуглов, С. А. Солдатов, Конституционный Суд РФ // Конституционное право России, Т.3, М 2001, С. 164.
- <sup>13</sup> Տե՛ս А. А. Безуглов, С. А. Солдатов, Конституционный Суд РФ // Конституционное право России, Т.3, М 2001, С.164.
- <sup>14</sup> Տե՛ս Н.В. Витрук. Конституционное правосудие. Судебно-конституционное право и процесс: учеб. пособие. 3-е изд. М.: Норма - ИНФРА-М, 2010. С. 345.
- <sup>15</sup> Տե՛ս Ж. И. Овсянн. Правовая защита конституции. Судебный конституционный контроль в зарубежных странах. Ростов-на-Дону, Литера-Д, 1992. С. 207.
- <sup>16</sup> Տե՛ս С. В. Нарутто, Обращение граждан в Конституционный Суд Российской Федерации: науч.-практ. пособие. М.: Норма- ИНФРА-М, 2011, С. 194.
- <sup>17</sup> Տե՛ս Ю. М. Бердюгина, Субъекты конституционного судопроизводства. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Екатеринбург 2011, С. 45-46.
- <sup>18</sup> Տե՛ս М. С. Саликов-отв. ред. Конституционный судебный процесс: учебник для вузов. Москва, НОРМА, 2003, С.80.
- <sup>19</sup> Տե՛ս В. В. Цибульский, Конституционное судопроизводство в Российской Федерации. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва-2005, С. 53.
- <sup>20</sup> Տե՛ս В. В. Цибульский, Конституционное судопроизводство в Российской Федерации, Автореферат дисс. канд. юрид. наук, Москва – 2005, <http://lawtheses.com/konstitutsionnoe-sudoproizvodstvo-v-rossiyskoy-federatsii>, 06.08.2013г.:
- <sup>21</sup> Տե՛ս Ж. И. Овсянн. Правовая защита конституций. Судебный конституционный контроль в зарубежных странах. Ростов-на-Дону: Литера-Д, 1992. С. 207.
- <sup>22</sup> Տե՛ս В. А. Кряжков, Л. В. Лазарев, Конституционная юстиция в Российской Федерации. М., 1998. С. 158.
- <sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, էջ. 162-164:
- <sup>24</sup> Տե՛ս В. А. Кряжков, Л. В. Лазарев, Конституционная юстиция в Российской Федерации. М., 1998. С. 158, 164-165.
- <sup>25</sup> Տե՛ս Ю. М. Бердюгина, Субъекты конституционного судопроизводства. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Екатеринбург 2011, С. 25-26.
- <sup>26</sup> Տե՛ս F. Atria, Legal Reasoning and Legal Theory Revisited // Law and Philosophy, Vol. 18, No. 5, Laws, Facts, and



Values (Sep., 1999), էջ 567:

<sup>27</sup> St'u J. Wryblewski, Legal Language and Legal Interpretation // Law and Philosophy, Vol. 4, No. 2, Legal Reasoning & Legal Interpretation (Aug., 1985), էջ 250-251:

<sup>28</sup> St'u Yan Lu, Study on Occurrence of Legal Argumentation, Asian Social Science Vol. 7. No. 6; June 2011, էջ 190:

<sup>29</sup> St'u նույն տեղում, էջ 191:

<sup>30</sup> Նշված վերջին նպատակը գործնականում կարևոր նշանակություն ունի իրավունքի այլ սուբյեկտների կողմից սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովող արդյունավետ համակարգ ձևավորելու խնդրում:

<sup>31</sup> St'u H. Kloosterhuis, The Strategic Use of Formal Argumentation in Legal Decisions // Ratio Juris. Vol. 21 No. 4 December 2008, էջ 496-497:

<sup>32</sup> St'u նույն տեղում, էջ 500:

<sup>33</sup> St'u նույն տեղում, էջ 501:

<sup>34</sup> St'u նույն տեղում, էջ 501:

<sup>35</sup> St'u նույն տեղում, էջ 501:

<sup>36</sup> St'u S. Berteau, Certainty, reasonableness and argumentation in law // Argumentation, Volume 18, Issue 4, January 2004, էջ 472:

<sup>37</sup> St'u նույն տեղում, էջ 475:

<sup>38</sup> St'u F. Atria, Legal Reasoning and Legal Theory Revisited // Law and Philosophy, Vol. 18, No. 5, Laws, Facts, and Values (Sep., 1999), էջ 540.

<sup>39</sup> St'u H. Kloosterhuis, The Strategic Use of Formal Argumentation in Legal Decisions // Ratio Juris. Vol. 21 No. 4 December 2008, էջ 502:

<sup>40</sup> Խոսքն անհատական հատկանիշներով տարբերվող հասցեատերերի մասին չէ, այլ իրավունքի այն սուբյեկտների, որոնց կարող է սահմանադրական դատարանի դիրքորոշումն առնչվել:

Самвел Аракелян

Соискатель кафедры конституционного и муниципального права  
Российско-Армянского (Славянского) университета

#### РЕЗЮМЕ

##### *Некоторые вопросы конституционного судопроизводства в Республике Армения*

Статья посвящается некоторым проблемным теоретическим и практическим вопросам конституционного судопроизводства в Республике Армения. В частности, автор дает оригинальное определение понятия конституционного судопроизводства, выделяет его основные этапы, а также анализирует особенности юридической аргументации в решениях Конституционного Суда РА.

**Ключевые слова:** конституционный суд, конституционное судопроизводство, стадии судопроизводства, конституционный контроль, субъект, юридическая аргументация, решение конституционного суда.

Samvel Arakelyan

Russian-Armenian (Slavonic) University Department of Constitutional  
and Municipal Law PhD candidate

#### SUMMARY

##### *On some issues of the constitutional adjudication in the Republic of Armenia*

The article is focused on theoretical and practical issues of the constitutional adjudication in the Republic of Armenia. The author proposes his definition of the concept of constitutional adjudication, identifies its main stages, as well as analyses the particularities of legal argumentation in the decisions of the Constitutional Court of RA.

**Keywords:** constitutional court, constitutional adjudication, stages, constitutional control, subject, legal argumentation, decision of the constitutional court.